

Կիրակի 27 Յուլիս.- Քահանայական Ձեռնադրության Խորհուրդին և Վեղարի Տուչությունն էտք, ի պատիւ նորընծաներուն, Միաբանական ընթրիք տրուեցաւ Պարտիզաթաղի սեղանատան մէջ, ուր Լուսարարապետ Ս. Սեւան Արք. Ղարիպեան այս բացառիկ առթիւ իր ուրախութիւնը յայտնեց Զինուորեալ Միաբանութեան թիւի աճումին համար՝ մաղթելով. «Աձինք հոգեւորական հետաքրքրութիւններով ու նուիրումով, արժանանալու համար “մշակ առանց ամօթոյ” կոչումին ու հրճուանքին»:

26-30 Օգոստոս.- Քահանայական Ձեռնադրության Խորհուրդին և Վեղարի Տուչությունն էտք, երեք նորընծաներու «քառասունք»ի առանձնացումը տեղի ունեցաւ Սրբոց Հրեշտակապետաց Վանքին ներս: Քառասնօրեայ խորհրդածութեան շրջանը ամբողջացնելէն անմիջապէս էտք, ըստ աագութեան կարգի, նորընծայ արեղաները իրենց անդրանիկ պատարագը մատուցին Սուրբ Յակոբայ Աւագ Խորանին վրայ:-

Երեքշաբթի, 26 Օգոստոս.- Ս. Գէորգ Աբեղայ Հայրապետեան

Հինգշաբթի, 28 Օգոստոս.- Ս. Ներսէս Աբեղայ Ալոյեան

Ուրբաթ, 29 Օգոստոս.- Ս. Աղան Աբեղայ Գոգչեան:

Շաբաթ, 30 Օգոստոս.- Պատարագեց Հ. Համբարձում Վրդ. Բէշիշեան՝ նորընծաներու «Քառասունք»ի ուսուցիչը, սպասարկութեամբ նորընծայ արեղաներուն, ըստ Ս. Յակոբի աւանդութեան:

Երեքշաբթի, 2 Սեպտեմբեր.- Դպրոցական նոր տարեմուտին Սրբոց Թարգմանչաց վարժարանը վերամուտը սկսաւ 156 աշակերտներով: Տարեմուտի արարողութիւնը տեղի ունեցաւ առաւօտեան ժամը 8:00-ին, ներկայութեամբ Լուսարարապետ՝ Գերշ. Ս. Սեւան Արք. Ղարիպեանի, Երուսաղէմի մէջ Պատուոյ Հիպատոս Տիար Յուլակ Մոմճեանի և Միաբանութեան անդամներուն: Վարժարանի Տեսուչ Հ. Նորայր Վրդ. Գազազեանի բարիգալուստի խօսքերէն էտք, Սրբազան Հայրը անդրադարձաւ կրթական գործի կարեւորութեան, մանաւանդ սփիւռքի մէջ: Ապա Լուսարարապետ Սրբազան Հայրը հոգեւորական հայրերուն հետ հանդիպում ունեցաւ Ս. Նորայր Վրդ. Գազազեանին հետ տեսարանին մէջ:

Հինգշաբթի, 4 Սեպտեմբեր.- Առաւօտեան ժամը 9:00-ին կատարուեցաւ Ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի վերաբացումը: Վերամուտի արարողութեան ներկայ էին Միաբանութեան Ուխտը և ուսուցչական կազմը, գլխաւոր

րութեամբ Ս. Աթոռոյ Լուսարարապետ Ս. Սեւան Արք. Ղարիպեանի: Իր բացման խօսքին մէջ, յետ ընթերցման Ս. Աւետարանի պատգամին, Լուսարարապետ Սրբազան Հայրը Ժառանգաւորներուն յիշեցուց ուսումնատենչ հոգեւորականներ ըլլալու անհրաժեշտութիւնը ի ծառայութիւն Հայաստանեայց Առաքելական Եկեղեցոյ:

Կիրակի, 21 Սեպտեմբեր.- Երեկոյեան ժամը 7:00-ին, Նոթըր Տամ պանդոկին մէջ, հիւրասիրութեամբ ՀՀ Երուսաղէմի մէջ Պատուոյ Հիպատոս Տիար Յուլակ Մոմճեանի, տօնախմբուեցաւ Հայաստանի անկախութեան 23-րդ տարեդարձը, որուն մասնակցեցաւ Լուսարարապետ Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Միաբանութեան հոգեւորական հայրերուն:

Չորեքշաբթի, 15 Հոկտեմբեր.- Առաւօտեան Պատրիարքարան այցի եկաւ Սպանիոյ Ընդհանուր Հիպատոս Տիար Եոհան Հոգէ Էսքոպար:

Երեկոյեան Ս. Ուխտիս միաբաններէն Հոգշ. Ս. Ժիրայր Վրդ. Թաշճեան Ֆրանսայէն ժամանեց Ս. Աթոռ և մեկնեցաւ երկու շաբաթ էտք:

23-25 Հոկտեմբեր.- Ս. Աթոռոյ միաբաններէն Հոգշ. Ս. Ժիրայր Վրդ. Թաշճեան և Հոգշ. Ս. Կորին Վրդ. Բաղդասարեան մասնակցեցան Երուսաղէմի «Քինկ Սոլոմոն» պանդոկին դահլիճին մէջ Արարատ Գիտութեանց Միջազգային Կաճառի կողմէ կազմակերպուած Զ. գիտաժողովին:

Շաբաթ, 28 Հոկտեմբեր.- Առաւօտեան ժամը 11-ին Սանկտ Փետրոսպոլէն և Ռուսիոյ այլ քաղաքներէն Երուսաղէմ ժամանած ուխտաւորներ, առաջնորդութեամբ Արժ. Ս. Սէբէոս Քինյ. Ղալաչեանի և Ս. Սարգիս Քինյ. Չոփուրեանի, այցելեցին Պատրիարքարան և ստացան Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը:

Չորեքշաբթի, 29 Հոկտեմբեր.- Երուսաղէմի Թուրքիոյ Ընդհանուր Հիպատոս՝ Տիար Մուսթաֆա Սարնիճի հրաւերով, Թուրքիոյ Հանրապետութեան անկախութեան 91-րդ տարեդարձին առիթով կազմակերպուած հիւրասիրութեան ներկայ գտնուեցան Ս. Արիս Արք. Շիրվանեան և Ս. Համբարձում Վրդ. Բէշիշեան:

Նոյն օրը երեկոյեան ժամը 8:00-ին, Պէճիքայի Ընդհանուր Հիպատոս՝ Տիար Պրունօ Ճանսի հրաւերով, դաշնակաւար Լաւորընս Միսիթարեանի համերգին և այդ առթիւ տրուած հիւրասիրութեան ներկայ գտնուեցան Ս. Արիս Արք. Շիրվանեան, ընկերակցութեամբ Հ. Համբարձում Բէշիշեանի:

Հինգշաբթի-Ուրբաթ, 29-30 Հոկտեմբեր.-

Պատրիարք Սրբազան Հայրը, Լուսարարապետ Ս. Սեան Արք. Ղարիպեան, Ս. Համբարձում Վրդ. Բեշիշեան, Ս. Նորայր Վրդ. Գազազեան և սարկաւագներ Յորդանանի մէջ կատարեցին Ս. Յովհաննէս Կարապետի անունը կրող մատրան օծման արարողութիւնը, ի ներկայութեան ՀՀ Նախագահ Տիար Սերժ Սարգսեանի և պետական այլ բարձրաստիճան այրերու (կարդալ մեր թղթակցութիւնը սոյն թիւին մէջ):

Նոյն օրը երեկոյեան ժամը 4:30-ին, Երուսաղէմի մէջ, Լուտերի շարժման բարեկարգութեան օրուայ առիթով կազմակերպուած երեկոյթին ներկայ գտնուեցան Ս. Արիս Արք. Շիրվանեան և Ս. Գեորգ Արք. Հայրապետեան:

Երկուշաբթի, 3 Նոյեմբեր.- Առաւօտեան ժամը 10-ին Պատրիարքարան այցի եկաւ Բալի-ֆորնիոյ հայահոծ Կլենտլի քաղաքապետ Տիար Նաճարեան:

Նոյն օրը երեկոյեան ժամը 5-ին Պատրիարքարան այցելեցին Երուսաղէմի Ոստիկանատան ոստիկանները, գլխատրութեամբ Կրօնից նախարարութեան Քրիստոնէական բաժնի պատասխանատու Տիար Սեզար Մարժիէին:

Չորեքշաբթի, 5 Նոյեմբեր.- երեկոյեան ժամը 4-ին ԱՄՆ-էն Տաճարական Ասպետներու մեծաւոր՝ Տիար Պուրն Ռ. Շիլտզ այցելեց Պատրիարքարան և հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Շաբաթ, 8 Նոյեմբեր.- Երեւանի Կոնդի շրջանի Ս. Յովհաննէս եկեղեցոյ հոգեւոր հովիւ Արժ. Ս. Դանիէլ Քինյ. Բաղումեան, ուխտաւորներու խումբով այցելեցին Պատրիարքարան և ստացան Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը:

Երկուշաբթի, 10 Նոյեմբեր.- Գերշ. Ս. Արիս Արք. Շիրվանեան կրօնական միա համայնքներու ներկայացուցիչներուն հետ միասին քրիստոնէական եկեղեցոյ զօրակցութիւն յայտնելու և status quo-ն պահպանելու առնչութեամբ այցելեց Երուսաղէմի Ալ-Աքսա մզկիթ:

Նոյն օրը երեկոյեան, Գերշ. Ս. Արիս Արք., ընկերակցութեամբ Ս. Էմմանուէլ Վրդ. Աթաշանեանի, մասնակցեցան Երուսաղէմի քաղաքապետարանի սրահներէն մէկուն մէջ Ռուս Եկեղեցոյ կազմակերպած նկարչական ցուցահանդէսին:

Երեքշաբթի 13 Նոյեմբեր.- Երուսաղէմի Ոստիկանապետ՝ Տիար Ալի Պիթօն այցելեց Պատրիարքարան և հանդիպեցաւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Կիրակի, 16 Նոյեմբեր.- Շաբթուան այցելութեամբ Վանքիս հիւրն էր Պոլիսէն

Ժամանաձ Ս. Զաքէա Մ. Վրդ. Օհանեան:

Չորեքշաբթի, 19 Նոյեմբեր.- Հառնօֆի Սինակոկին մէջ կատարուած ահաբեկչութեան հետեւանքով Հրեայ զոհերուն համար ցաւակցութիւն յայտնելու գացին Ս. Արիս Արք. Շիրվանեան և Ս. Նորայր Վրդ. Գազազեան:

Հինգշաբթի, 20 Նոյեմբեր.- Պատրիարք Սրբազան Հօր այցելեցին Երուսաղէմի Հ.Օ.Մ.ի վարչութեան անդամ-անդամուհիները և ստացան անոր օրհնութիւնը:

Երեքշաբթի, 25 Նոյեմբեր.- Երեկոյեան ժամը 4-ին, Ֆինլանտայէն՝ Տաճարական Ասպետներ այցելեցին Պատրիարքարան և հանդիպում ունեցան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Նոյն օրը Ռամալլային “Golden” պանդոկին մէջ Պելճիքայի Ընդհանուր Հիւպատոսարանի կողմէ երկրի թագաւորի օրուան առթիւ կազմակերպուած հանդիսութեան ներկայ գտնուեցան Ս. Արիս Արք. Շիրվանեան, ընկերակցութեամբ Ս. Համբարձում Վրդ. Բեշիշեանի և Ս. Էմմանուէլ Վրդ. Աթաշանեանի:

Երեքշաբթի, 2 Դեկտեմբեր.- Պաշտօնական այցով Ս. Երկիր ժամանեց Հապէշ Ուխտի Միաբանութեան նորընտիր Արքեպիսկոպոս Գերշ. Ս. Արքա Էնթակում: Իր ժամանումին դիմաւորութեան թափօրին մասնակցեցան Գերշ. Ս. Արիս Արք. Շիրվանեան և Աւագ Թարգման Ս. Համբարձում Վրդ. Բեշիշեան երկու «գաւասներով», մինչեւ Ս. Յարութեան Տաճարի մուտքը, ուր Տաճարի տեսուչ Ս. Սամուէլ Մ. Վրդ. Աղոյեան Ֆրանսիացեան և Յոյն տեսուչներուն հետ միասին պաշտօնապէս դիմաւորեցին Հապէշաց նորընտիր Արքեպիսկոպոսը: Քրիստոսի գերեզմանին այցելութենէ ետք Գերշ. Սրբազան Հայրը առաջնորդուեցաւ մեր տեսչարանը, ուր տեղի ունեցաւ հիւրասիրութիւն և Ս. Արիս Արք. Շիրվանեան կատարեց իր ողջոյնի խօսքը: Ապա Տէր Ըլ Սուլթանի Հապէշաց եկեղեցոյ մէջ կատարուեցաւ նորընտիր Սրբազան Հօր գահակալութիւնը:

